Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԽ նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«_12_» _____03_____ 2021թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգը սահմանում է Ավանդական Բժշկության Համալսարանում (այսուհետ՝ ԱԲՀ) Մասնագիտության կրթական ծրագրերով նախատեսված դասընթացների արդյունավետության գնահատման հարցումների նպատակը, պահանջները, հարցումների անցկացման, արդյունքների մշակման և օգտագործման կարգը:

1.2. Հարցումներն անցկացվում են «Կրթության մասին» ՀՀ օրենքի և ԱԲՀ-ի ռազմավարության պահանջների հիման վրա:

1.3. Կանոնակարգը կիրառելի է ԱԲՀ-ի Ուսումնական մասի և Գիտխորհրդին կից Որակի ապահովման հանձնաժողովի կողմից նախաձեռնած հարցումների շրջանակում և համարվում է պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու կարևոր բաղադրիչ:

1.4. Հարցումների նպատակն է՝ կատարելագործել կրթական գործընթացները և ապահովել որակյալ կրթություն:

2. Հարցաթերթիկի մշակման պահանջները

Հարցաթերթիկի մշակմանը ներկայացվող հիմնական պահանջներն են՝

1) հարցման նպատակի սահմանում,
2) հարցման բովանդակության համապատասխանություն Համալսարանի գործունեության նպատակներին և խնդիրներին,
3) մասնակցության գաղտնիություն,
4) հարցման գործընթացի համակարգվածություն և պարբերականություն,
5) պատճառահետևանքային կապեր հաստատող փակ և բաց հարցերի ներառում,
6) հարցման չափանիշների կիրառում:

3. Հարցման անցկացումը

3.1. Հարցումն իրականացվում է Ուսումնական մասի կողմից՝ քննաշրջանից անմիջապես հետո՝ ըստ նախապես հաստատված ժամանակացույցի[1]:

3.2. Հարցումն անանուն է և անցկացվում է թղթային, ինչպես նաև առցանց տարբերակով:

3.3. Հարցումն իրականացվում է կուրսի/խմբի ուսանողների առնվազն երկու երրորդի մասնակցության պայմաններում՝ պահպանելով ժամանակացույցով սահմանված վերջնաժամկետները:

3.4. Սույն կանոնակարգին կից ներկայացվում է գնահատման հարցաթերթը (հավելված 1), որում ուսանողը պատասխանում է առաջադրված հարցերին, գնահատման սանդղակով արտահայտում իր համաձայնության (անհամաձայնության) աստիճանը:

4. Հարցման արդյունքների մշակումը, օգտագործումը և պահպանումը

4.1. Ուսումնական բաժնի կողմից անցկացված հարցման արդյունքները մշակվում են և վերլուծվում են գործընթացին ներգրավված ստորաբաժանումների, ուսխորհրդի ներկայացուցիչների և որակի ապահովման մասնագետի մասնակցությամբ: Այս նպատակով կարող է ստեղծվել 2-5 հոգուց բաղկացած աշխատանքային խումբ:

4.2. Հարցաթերթն ունի կարծիքների և առաջարկությունների բաժին, որի արդյունքները մշակվում և ներկայացվում են ընդհանրացված առաջարկությունների տեսքով:

4.3. Հարցաթերթում կատարված ուղղումները, ջնջումները, առցանց տարբերակում խոտանված պատասխանները չեն հաշվարկվում:

4.4. Վերլուծության արդյունքները ներկայացվում են ամբիոններին, Ուսխորհրդին՝ ծանոթանալու և երկու շաբաթվա ընթացքում բարելավման առաջարկություններ ներկայացնելու համար:

4.5. Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորը (ՈԱԿԲ պրոռեկտոր) մեկ ամսվա ընթացքում հրավիրում է նիստ, որտեղ քննարկվում են Հարցումների արդյունքները և մշակվում դասընթացների արդյունավետությանն ուղղված առաջարկություններ և խորհուրդներ:

4.6. Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորը մշակում է բարելավման գործողությունների ծրագիր, որտեղ նշվում են դրանց իրականացման ժամկետները, պատասխանատուները և ներկայացնում ԱԲՀ-ի ԳԽ-ի հաստատմանը:

4.7. Բարելավման գործողությունների ծրագրի նպատակային իրականացման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է որակի ապահովման և կրթական բարեփոխումների ապահովման գծով պրոռեկտորը:

---

[1] *Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորի և Ուսումնական մասի վարիչի կողմից կազմվում է Համալսարանում հարցումների անցկացման ժամանակացույց:*

4.8. Հարցման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է ԱԲՀ-ի պաշտոնական կայքում:

4.9. Հարցաթերթերը և վերլուծությունները պահվում են 5 տարի՝ Ուսումնական մասում:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. ԱԲՀ-ի հարցման կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ է կատարում ԱԲՀ-ի Գիտական խորհուրդը:

5.2. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Գիտական խորհրդի կողմից հաստատվելուց հետո:

Հավելված 1

«____» _____20 թ.

Դասավանդման որակի և արդյունավետության գնահատման հարցաթերթ

ԱԲՀ-ի հարգելի՛ ուսանող, Դուք մասնակցում եք դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ Ուսումնական մասի կողմից պարբերաբար անցկացվող ուսանողական հարցմանը: Ձեր անկեղծ և օբյեկտիվ գնահատականներն ու կարծիքները կնպաստեն ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Հարցումն անանուն է և ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված տեսքով: Խնդրում ենք Ձեզ՝ ուշադիր կարդալ և ամբողջությամբ լրացնել թերթիկը, որտեղ թվարկվում են անցյալ կիսամյակում Ձեզ դասավանդած բոլոր դասախոսների մանկավարժական որակները:

1. Նշեք Ձեր ֆակուլտետը _____ Կուրսը ____ Խումբը _____
2. Նշեք Ձեր սեռը

Արական ☐ Իգական ☐

Դասախոսությունների վերաբերյալ

	Գնահատման չափանիշներ	Առարկայի անվանումը/ դասախոսի ազգանունը, անունը							
1.	Դասախոսն ուսանողներին ներկայացնում է առարկայի նկարագիրն ամբողջությամբ, հստակ բացատրում է նպատակը, ակնկալվող արդյունքները								
2.	Ներկայացնում է դասընթացի մեջ նյութի/թեմայի կարևորությունը								
3.	Ապահովում է տրամաբանական կապը դասի նախորդ և հաջորդ թեմաների հետ								
4.	Դասախոսը ժամանակը արդյունավետ է կազմակերպում ողջ դասընթացի ընթացքում								
5.	Դասավանդման ընթացքում կիրառում է նորագույն տեխնիկական միջոցներ								
6.	Դասավանդողն ուսանողին գնահատում է արդար ու թափանցիկ								

7.	Նյութը մատուցում է պարզ, հասկանալի և մատչելի							
8.	Դասախոսը հարց ու պատասխանի և այլ մեթոդների կիրառմամբ ապահովում է ուսանողների ներգրավվածությունը դասընթացում							
9.	Կիրառում է դասավանդման տարբեր մեթոդներ							
10.	Թեմայի ավարտին դասախոսը կատարում է ամփոփում՝ ներկայացնելով հաջորդ դասախոսությունը							
11.	Դասախոսը հարգալից վերաբերունք է ցուցաբերում ուսանողի նկատմամբ							
12.	Անհատական աշխատում է ուսանողների հետ							
13.	Դասավանդողը հնարավորություն է տալիս ուսանողներին իրեն դիմել լսարանից դուրս՝ դասընթացին առնչվող հարցերով							
14.	Օժանդակում է ուսանողին մասնագիտական գրականությունից օգտվելու և էլեկտրոնային նյութեր տրամադրելու հարցում							
15.	Դասի ընթացքում պահում է լսարանի կարգապահությունը							
16.	Կարողանում է հետաքրքրություն առաջացնել իր առարկայի նկատմամբ							
17.	Խրախուսում է ուսանողների խմբային աշխատանքը							
18.	Դասավանդողը անհրաժեշտ գիտելիքներ ունի առարկայից դուրս պատասխանելու ուսանողների հարցերին							
19.	Հետաքրքիր անձնավորություն է, նրանից կարելի է շատ բան սովորել							
20.	Գնահատեք դասավանդման լեզվին տիրապետելու կարողությունը							

3. Գործնական/սեմինար պարապմունքների համար

	Գնահատման չափանիշներ	Առարկայի անվանումը/ դասախոսի ազգանունը, անունը							
1.	Բացատրում է թեմայի նպատակը և ակնկալվող արդյունքները								
2.	Անհրաժեշտության դեպքում բացատրում է անվտանգության և այլ ընթացակարգային հարցեր								
3.	Դասի սկզբում հստակեցնում է գործնական/լաբորատոր պարապմունքի նյութը								

4.	Կիրառում է դասավանդման նորարարական մեթոդներ, հնարքներ							
5.	Կիրառում է ուսանողակենտրոն մեթոդներ ու մոտեցումներ (համագործակցային/ ինտերակտիվ, թիմային, անհատական և այլն)							
6.	Դասախոսն ապահովում է ուսանողների ներգրավումը քննարկումների մեջ							
7.	Ստեղծում է մրցակցային միջավայր							
8.	Գնահատում է սահմանված չափանիշներին համապատասխան							
9.	Դասի ավարտին պատասխանում է ուսանողների հարցերին							
10.	Դասին հատկացված ժամանակի կառավարում							

4. Ի՞նչ կցանկանայիք, որ փոխվեր դասավանդման գործընթացում

_____

_____

_____

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար